ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱԶՈ» (ԱՎԱՆԴԱՐՈՅԶԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 79- 80 (16275) ՇԱԲԱԹ, 11 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2014 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱԶՄԱԴԱՐՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔԻ ՎՐԱ

Հոկտեմբերի 6-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու հրավերով, եռօրյա պաշտոնական այցով, Թբիլիսի ժամանեց Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը: Հայաստանի Աժ նախագահի գլխավորած պատվիրակության կազմում էին Ազգային ժողովի փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը, Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Հրայր Թովմասյանը, Ազգային ժողովի պատգամավորներ Հրանտ Գրիգորյանը, Արծվիկ Մինասյանը, Վարդան Այվազյանը, Տաճատ Վարդապետյանը, Նիկոլ Փաշինյանը, Թեւան Պողոսյանը եւ Վահրամ Բաղդասարյանը:

Այցի շրջանակներում Հայաստանի Ազգային ժողովի նախագահը հանդիպումներ ունեցավ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլու, նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի, Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հետ, մասնակցել Հայաստանի Ազգային ժողովի եւ Վրաստանի խորհրդարանի միջեւ համագործակցության միջխորհրդարանական խմբերի նիստին:

Այցի շրջանակներում անցկացված հանդիպումներին մասնակցում էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը եւ Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Թենգիզ Շարմանաշվիլին:

Պաշտոնական այցի առաջին օրը Վրաստանի խորհրդարանում կայացավ օրենսդիր մարմնի ղեկավար Դավիթ Ուսուփաշվիլու հանդիպումը Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Հանդիպմանը Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, բարձր գնահատելով երկու երկրների բարեկամական հարաբերությունները, տարբեր բնագավառներում փոխշահավետ համագործակցությունը, վստահություն հայտնեց, որ երկու երկրների դարավոր բարեկամությունն ավելի կամրապնդվի: Դավիթ Ուսուփաշվիլին նշեց, որ երկու խորհրդարանների համագործակցության շրջանակը այսուհետեւ նույնպես կընդլայնվի, փոխգործակցությունը կխորանա: Նա կարեւորեց մասնավոր հատվածում երկու երկրների համագործակցության զարգացումը: Անդրադառնալով տարածաշրջանային խնդիրներին՝ Դավիթ Ուսուփաշվիլին վստահեցրեց, որ Վրաստանի իշխանությունները կողմ են տարածայնությունների խաղաղ կարգավորմանը: Վրաստանի Աժ խոսնակը կարեւորեց երկու հարեւան երկրների միջեւ բարիդրացիական հարաբերությունների պահպանումն ու խորացումը:

Շնորհակալություն հայտնելով հրավերի եւ ջերմ ընդունելության համար՝ Հայաստանի Աժ նախագահ Գալուստ Սահակյանը բարձր գնահատեց Վրաստանի հետ միջպետական հարաբերությունները, եւ համոզմունք հայտնեց, որ հայ-վրացական հարաբերությունները վերընթաց են ապրում: Գալուստ Սահակյանը կարեւորեց միջխորհրդարանական կապերի դերը միջպետական հարաբերությունների զարգացման գործում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի հանդիպմանը հիմնականում քննարկվեցին միջպետական համագործակցության ոլորտներին վերաբերող հարցեր:

Իրակլի Ղարիբաշվիլին, ողջունելով Գալուստ Սահակյանին եւ Հայաստանի պատվիրակության անդամներին, փաստեց, որ Ազգային ժողովի պատվիրակության պաշտոնական այցը Վրաստան երկու երկրների բարեկամության եւ եղբայրության վկայությունն է:

Վրաստանի վարչապետի հետ հանդիպմանը Գալուստ Սահակյանը գոհունակությամբ նշեց, որ երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՆՍՏԱՎԱՅՐՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին կայացավ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու եւ Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանի հանդիպումը:

Վրաստանի նախագահի նստավայրում կայացած հանդիպմանը քննարկվեցին մշակութային, քաղաքական եւ տնտեսական ոլորտներում միջպետական համագործակցությանն առնչվող բազմաթիվ հարցեր:

Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը Վրաստանի նախագահի հետ հանդիպմանն իր մտահոգությունը հայտնեց տարածաշրջանում սպառազինությունների մրցավազքի վերաբերյալ, որը վտանգ է ներկայացնում բոլոր երկրների համար:

ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԿՈԹՈՂՆԵՐ»

Հոկտեմբերի 6-ին, պաշտոնական այցի անդրանիկ օրը վրաց պատրիարքարանում կայացավ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդի հանդիպումը Հայաստանի Աժ նախագահ Գալուստ Սահակյանի եւ նրա գլխավորած պատվիրակության անդամների հետ:

Շնորհակալություն հայտնելով ընդունելության համար՝ Հայաստանի Աժ նախագահը նշեց, որ երկու երկրների միջեւ միջմշակութային հարաբերությունները մշտապես եղել են ուշադրության կենտրոնում: Եվ դա բնական է, քանի որ հարեւան ժողովուրդների մշակութային կապերը եւ պատմականորեն ձեւավորված արժեքային ընդհանուր համակարգը հիմք են հանդիսանում հետագա համագործակցության զարգացման համար: Այդ համատեքստում Գալուստ Սահակյանը Վրաստանի կաթողիկոսի ուշադրությունը հրավիրեց Վրաստանի տարածքում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին՝ անհրաժեշտ համարելով հրատապ քայլեր ձեռնարկել Մուղնեցոց Սուրբ Գեւորգ, Սուրբ Նշան եւ Սուրբ Նորաշեն եկեղեցիների վերականգնման ու պահպանության գործում: Գալուստ Սահակյանը նաեւ մտահոգություն հայտնեց Միջին Արեւելքում տեղի ունեցող իրադարձությունների առնչությամբ՝ նշելով, որ Սի-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՍԿՍՎԵՑԻՆ ՆՈՐԱՇԵՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼԻՆ ԿԱՏԱՐՈՒՄ Է ԻՐ ԽՈՍՏՈՒՄԸ



Հոկտեմբերի 4-ին սկսվեցին Թբիլիսիում, Լեսելիձեի փողոցի վրա գտնվող Սուրբ Նորաշեն եկեղեցու վերանորոգման աշխատանքները:

Հիշեցնենք, որ վարչապետի պաշտոնում Երեւան կատարած պաշտոնական այցի ժամանակ, Բիձինա Իվանիշվիլին խոստացել էր հնարավորինս աջակցել վթարային վիճակում գտնվող մի քանի եկեղեցիների, այդ թվում՝ Սուրբ Նորաշեն եկեղեցու վերանորոգմանը: Եվ ահա, Բիձինա Իվանիշվիլու «Քարթու» հիմնադրամի ֆինանսավորմամբ սկսվեց Նորաշեն եկեղեցու վերանորոգումը:

Տաճարի վերանորոգման նախագիծը պատրաստվել է Վրաստանի մշակույթի նախարարության մշակութային ժառանգության պաշտպանության գործակալության կողմից, որն էլ իրականացնում է աշխատանքների վերահսկողությունը: Առաջին փուլում անցկացվում են եկեղեցու հիմքերի եւ պատերի ամրացման աշխատանքները, ապա կսկսվի որմնանկարների վերականգնումը: Նախնական տվյալներով, վերանորոգման աշխատանքների միայն առաջին փուլի իրականացման համար նախատեսվել է մեկ տարի ժամանակ:

Ինչպես նշեցին նախարարությունում, տաճարը պատմա-մշակութային ժառանգության կոթող է եւ դրա պահպանում-վերանորոգումը առաջնահերթ խնդիր է:

ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ՀԵՌՈՒՍՏԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՂՈՐԴԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 9-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ վրացական հեռուստաալիքների հաղորդավարների հետ:

Դռնփակ հանդիպմանը երկրի նախագահը հետաքրքրվեց այն մարտահրավերներով եւ հիմնախնդիրներով, որոնք ծառացած են լրատվամիջոցների ներկայացուցիչների առջեւ:

Հանդիպմանը, որին ներկա էին վրացական հեռուստաընկերությունների լրատվական ծառայությունների ղեկավարներն ու քաղաքական թոք-շոուների հաղորդավարները, քննարկվեցին նաեւ թվային հաղորդման անցման, ինչպես նաեւ հեռուստաընկերությունների վարկանիշների չափման մեխանիզմների հետ առնչվող հարցեր: Հանդիպմանը Վրաստանի նախագահն ընդգծեց, որ երկրում ժողովրդավարության զարգացման համար անհրաժեշտ է ազատ եւ անկախ լրատվամիջոցների առկայություն եւ պատրաստակամություն հայտնեց հնարավորինս աջակցել զանգվածային լրատվամիջոցների առջեւ ծառացած հիմնախնդիրների կարգավորման հարցում:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՍԿՍՎԵԼ Է 2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Վրաստանի խորհրդարանը ձեռնամուխ է եղել երկրի 2015 թվականի պետբյուջեի՝ կառավարության կողմից ներկայացված նախագծի քննարկմանը:

Պետբյուջեի քննարկումը, ինչպես նաեւ դրան զուգահեռ օրենսդրական որոշ փոփոխությունների իրականացումը, կանցկացվի խորհրդարանի կոմիտեներում, ինչպես նաեւ մեծամասնություն-փոքրամասնություն ձեւաչափով, որից հետո ներկայացված դիտողություններով ու առաջարկություններով խորհրդարանը լիագումար նիստում կքննարկի սկզբնական նախագիծը:

Վերամշակված նախագիծը խորհրդարանի քննարկմանը պետք է ներկայացվի նոյեմբերի սկզբին:

Պետբյուջեի նախնական նախագծի համաձայն, 2015 թվականի համար ծրագրվել է ՀՆԱ-ի 5 տոկոս աճ: Տնտեսական աճը ծրագրված է 5,5 տոկոսի շրջանակներում: Մակրոտնտեսական ցուցանիշներից ելնելով, 2015 թվականի համար ՀՆԱ-ի նոմինալ ծավալը կազմելու է 31,8 միլիարդ լարի, իսկ 2018 թվականի համար այն հասցվելու է 41,6 միլիարդ լարիի:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՈՉ ՄԻ ԵՐԿԻՐ ԱՌԱՆՑ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՉԻ ԿԱՐՈՂ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ ՏԵՂԱԲԱՇԽԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ»

Առանց երկրի իշխանությունների թույլտվության, ոչ մի պետություն չի կարող իր զինված ուժերը տեղաբաշխել Վրաստանի տարածքում:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, մեկնաբանելով Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության հայտարարությունն այն մասին, որ «ՆԱՏՕ-ի շահերից ելնելով, Վրաստանում ռազմական ենթակառույցների տեղակայումը սպառնալիք կստեղծի անդրկովկասյան տարածաշրջանի կայունությանը»: «Մեր երկրի տարածքի 20 տոկոսը բռնազավթված է: Բնականաբար, ոչ մի պետություն առանց Վրաստանի իշխանությունների թույլտվության, չի կարող երկրի տարածքում տեղաբաշխել իր զինված ուժերը: Դա հենց մեր դիրքորոշումն է»,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

ՌԱԶՄԱԿԱՆ ԴՊՐՈՑ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության նոր փաթեթով նախատեսվում է ոչ միայն վարժական բազա կառուցել Վրաստանի տարածքում, այլեւ ռազմական դպրոց եւ լոգիստիկայի կենտրոն:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ալասանիան:

Հիշեցնենք, որ ՆԱՏՕ-ի գագաթաժողովի ընթացքում, որը սեպտեմբերի 4-5-ը տեղի էր ունեցել Ուելսում, հաստատվել է միջոցառումների փաթեթ, որոնք կօժանդակեն Վրաստանին՝ դաշինքին անդամակցելու նրա ճանապարհին:

«Համագործակցության նոր փաթեթում կան նաեւ այլ նախաձեռնություններ, ինչպես, օրինակ, ռազմական դպրոցի կառուցումը, որտեղ պատրաստություն կանցնեն տարբեր երկրների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ լոգիստիկայի կենտրոնի հիմնումը, որը կնպաստի վարժանքներ անցկացնելուն»,- ասաց Իրակլի Ալասանիան:

Նրա խոսքով՝ պաշտպանական գերատեսչությունն արդեն ՆԱՏՕ-ին է ուղարկել իր դիրքորոշումն այն բանի նկատմամբ, թե ինչպիսին պետք է լինի վարժական բազան, եւ պատասխան է սպասում դաշինքի անդամ երկրներից: Ընդամին Ալասանիան նշեց, որ համագործակցության նոր փաթեթի շրջանակներում Վրաստանում նախագծերի իրացման գործընթացը վերահսկելու է ՆԱՏՕ-ի հատուկ խումբը:

ՆԱՏՕ-Ի ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ ՎՏԱՆԳ ՉԻ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցությունը ոչ մի վտանգ չի ստեղծում տարածաշրջանային անվտանգության համար:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն՝ մեկնաբանելով ՌԴ ԱԳ նախարարության արած հայտարարությունը:

Ինչպես նախօրյակին նշել են Ռուսաստանի ԱԳ նախարարությունում, ի շահ ՆԱՏՕ-ի Վրաստանում ռազմական ենթակառուցվածքի ներդրումը սպառնալիք կստեղծի անդրկովկասյան տարածաշրջանում հաստատվող կայունության համար: Հայտարարությունը տարածվել էր Ժնեւյան բանակցությունների հերթական փուլի կապակցությամբ, որը տեղի է ունեցել հոկտեմբերի 7-8-ը:

«ՆԱՏՕ-ի հետ մեր համագործակցությունը ոչ մի վտանգ չի ստեղծում տարածաշրջանային անվտանգության համար: Տարածաշրջանային անվտանգությանը վնաս են հասցնում, շատ լուրջ խնդիրներ են ստեղծում չլուծված հակամարտությունները, եւ հատկապես դրանում ենք մենք տեսնում Ռուսաստանի դերը: Սա ամենաբարդ խնդիրներից մեկն է Ռուսաստանի հետ արեւմտյան երկրների հարաբերություններում»,- լրագրողներին ասել է Զուրաբ Աբաշիձեն:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՍՈՒԽՈՒՄԻՆ ԻՆԳՈՒՐԻԻ ԱՆՑԱԿԵՏԵՐԸ ՓԱԿՈ՞ՒՄ Է

Աբխազիայի նախագահ Ռաուլ Խաջիմբան, Աբխազիայի ժողովրդական միասնության համաժողով կուսակցության քաղաքական խորհրդի նիստում հայտարարել է Վրաստանի հետ Ինգուր գետով անցնող այսպես կոչված պետական սահմանն ամրապնդելու անհրաժեշտության մասին:

Խաջիմբան կուսակիցներին խոստացել է կրճատել վրաց-աբխազական սահմանի հսկիչ անցակետերը եւ թողնել միայն մեկը:

«Վրաստանի հետ Ինգուր գետով անցնող պետական սահմանը կամրապնդվի, այնտեղ պետք է գործի միայն մեկ անցակետ, հաշվի առնելով պետության անվտանգությունը՝ մնացած բոլոր անցակետերն անհրաժեշտ է փակել»,- ասել է նախագահը:

Իր հերթին՝ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, մեկնաբանելով Ռաուլ Խաջիմբայի, անցակետերի վերաբերյալ հայտարարությունը, ասաց, որ Վրաստանը ցանկանում է սկսել աբխազ եւ օս եղբայրների հետ իրապես հաշտվելու գործընթացը:

«Նոր նախաձեռնություն է հնչել Աբխազիայի դե-ֆակտո իշխանությունների կողմից: Այդ կապակցությամբ ես ցանկանում եմ, նշել, որ իշխանության գլուխ գալուց հետո մենք հայտարարել ենք մեր աբխազ եւ օս եղբայրների հետ իրական հաշտության գործընթաց սկսելու ցանկության ու պատրաստակամության մասին»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին: Նա նաեւ խելամիտ չի համարել Աբխազիայի իշխանությունների նախաձեռնությունը եւ նշել է, որ այդ որոշումը կվատացնի մեր քաղաքացիների դրությունը տեղերում»:

«Մենք պատրաստ ենք ցանկացած հումանիտար օգնություն ցուցաբերել մեր եղբայրներին: Պատահական չէ, որ սահմանազատման գծի մոտ մենք կառուցում ենք բազմաֆունկցիոնալ հիվանդանոց, որի շինարարությունը կավարտվի երկու տարուց, եւ մեր աբխազ եւ օս եղբայրները կկարողանան բուժվել այնտեղ»,- հավելել է Վրաստանի վարչապետը:

Հիշեցնենք, որ 2013 թվականի մայիսին Աբխազիայի Գալիի շրջանում, Ինգուր գետի կամրջով գլխավոր անցակետից բացի, բացվել է հինգ լրացուցիչ անցակետ, չորսը՝ հետիոտների եւ մեկը՝ ավտոմեքենաների համար:



ՈՒԿՐԱԻՆԱ

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

Ուկրաինայի հարավի հակամարտությունն արդեն խլել է 3 հազար 627 մարդու կյանք, եւս 8 հազար 447-ը տարբեր աստիճանի վնասվածքներ են ստացել: Հոկտեմբերի 4-ին նման տվյալներ է ներկայացրել ՄԱԿ-ի հումանիտար հարցերով զբաղվող վարչությունը:

Ըստ ՄԱԿ-ի ներկայացրած տվյալների՝ հակամարտության գոտում ապրում է ավելի քան 5 մլն մարդ: Նրանցից 379 հազարը տեղափոխվել է այլ շրջաններ, իսկ 426 հազարը՝ այլ երկրներ: Համաձայն զեկույցի՝ Ուկրաինայի հարավում հրադադարի մասին համաձայնագրի ստորագրումից 3 շաբաթ անց զինադադարը պարբերաբար խախտվում է: Ճիշտ է, հրադադարի վերաբերյալ ձեռք բերված համաձայնության շնորհիվ Ուկրաինայի արեւելքում մարտական գործողությունների ինտենսիվությունն զգալիորեն նվազել է, բայցեւայնպես Հրադադարի հաստատումից հետո Ուկրաինայի արեւելքում զոհվել է առնվազն 331 մարդ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ԳՐՈԶՆԻՈՒՄ

Չեչնիայի մայրաքաղաք Գրոզնիում պայթյուն է որոտացել, ինչի հետեւանքով 4 ոստիկան է զոհվել:

Հոկտեմբերի 5-ին նշվում էր Գրոզնի քաղաքի օրը: Ծրագրի շրջանակներում անցկացվելու էր համերգ: Տարածքում ծառայություն անցկացնող ոստիկանները համերգասրահի մոտ կասկածելի արտաքինով երիտասարդ տղամարդու են նկատել: Երբ ոստիկանները որոշել են մոտենալ նրան եւ պարզել ինքնությունը՝ վերջինս աշխատեցրել է պայթուցիկ սարքը, որի արդյունքում 4 ոստիկան է զոհվել, եւս 4-ը տուժել են:

ԹՈՒՐՔԻԱ

ԲԱԽՈՒՄՆԵՐ՝ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Թուրքիայի տարբեր նահանգներում եւ քաղաքներում տարածված անկարգությունների ալիքը չի դադարում: Հոկտեմբերի 6-ից սկսված ցույցերի ժամանակ ցուցարարների եւ իրավապահ մարմինների միջեւ բախումների արդյունքում զոհերի թիվը շարունակում է աճել: Երկրում անկարգությունների հետեւանքով զոհերի թիվը հասել է 35-ի:

Ըստ նոր տվյալների՝ Դիարբեքիրում զոհվել է 10 մարդ, Մարդինում՝ 6, Սիիրթում (Սղերթ)՝ 5, Ադանայում՝ 1, Մուշում՝ 1, Բաթմանում՝ 1, Վանում՝ 1, Գազիանթեփում՝ 4, Բինգյոլում՝ 4: Ցուցարարներից բացի Բինգյոլում զոհվել է 2 ոստիկան:

Անկարգությունների հետեւանքով Թուրքիայում մեծ թվով վիրավորներ ու ձերբակալվածներ կան: Երկրի տարբեր քաղաքներում դադարեցվել են դասերը դպրոցներում ու համալսարաններում:

ՉԻՆԱՍՏԱՆ

ԳԵՐԱԶԱՆՑԵՑԻՆ ԱՄՆ-ԻՆ

Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) տվյալների համաձայն՝ Չինաստանը դարձել է աշխարհի խոշորագույն տնտեսությունը՝ ետեւում թողնելով ԱՄՆ-ին: ԱՄՀ-ն գնահատման համար հիմնվել է գնողունակության համարժեքության հաշվարկման մեթոդի վրա:

Քանի որ գները նույնը չեն կարող լինել երկու երկրում, դրա համար էլ հաշվի է առնվել գնողունակության համարժեքությունը: Համեմատելով Չինաստանում եւ ԱՄՆ-ում ստացվող աշխատավարձերը՝ գնահատվում է, թե ինչ գնողունակության համարժեքություն կարող է ունենալ անհատը եւ հետեւաբար՝ երկիրը:

Արդյունքում, հաշվի առնելով գնողունակության գործոնը, ներկա պահին Չինաստանը շրջանցել է ԱՄՆ-ին՝ դառնալով խոշորագույն տնտեսությունն աշխարհում:

Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Երիտասարդական 13-րդ օլիմպիական փառատոնի անցկացման աշխատանքներին ծանոթանալու, Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ստեղծման 25-ամյա հոբելյանին նվիրված միջոցառումներին մասնակցելու նպատակով, Վրաստանում է գտնվում միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Թոմաս Բախը:

Այցի շրջանակներում նա հանդիպում ունեցավ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու հետ: Կողմերը օլիմպիական փառատոնի նախապատրաստական աշխատանքների հանրագումարից բացի, անդրադարձան վրաց օլիմպիական շարժման, վրացական սպորտի զարգացման հարցերին: Անդրադառնալով երիտասարդական օլիմպիական փառատոնի թեմային, Վրաստանի վարչապետը նշեց, որ Թբիլիսին ետխորհրդային տարածքի առաջին քաղաքն է, որին տրվեց փառատոնի անցկացման պատիվը, ինչը եվրոպական օլիմպիական կոմիտեի կողմից ցուցաբերած վստահությունն է:

Հանդիպման ավարտին Վրաստանի ազգային օլիմպիական կոմիտեի նախագահ Լերի Խաբելովը վարչապետին հանձնեց ազգային օլիմպիական կոմիտեի 25-ամյակին նվիրված հոբելյանական մեդալը եւ հուշանվեր:

Հանդիպանը ներկա էին Եվրոպայի օլիմպիական կոմիտեի նախագահ Պատրիկ Խիկը եւ Վրաստանի երիտասարդության եւ սպորտի գործերով նախարար Լեւան Ղիփիանին:

ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՕՏԱՐԵՐԿՐԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԿՊԱՀՊԱՆՎԵՆ

Ինչպես նշեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, «Օտարերկրացիների մասին» օրենքում հնարավոր են փոփոխություններ, թեպետ դրանք կառնչվեն միայն վարորդներին: Նրա խոսքերով, սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած օրենքի անկյունաքարը ասոցիացման համաձայնագրի ստորագրումն էր: «Օրենքը թույլ է տալիս մեզ առաջ ընթանալ այցեգրային համակարգի ազատականացման ուղղությամբ: Ուստիեւ, օրենքի հիմնական դրույթները չեն փոխվի, թեպետ քննարկվում են տարբերակներ այցեհրավիրագրերի հանձնման գործընթացի դյուրացման ուղղությամբ»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

ՎՐԱՍՏԱՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է ՎԵՐԱՆԱՅԻ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, լրագրողների հետ հանդիպմանը, նշեց, որ այցեգրային քաղաքականության գործարկման ընթացքում հայտնաբերած թերացումների դեպքում, այդ քաղաքականության վերանայումը չի բացառվում:



Հիշեցնենք, որ սեպտեմբերի 1-ից ուժի մեջ է մտել «Օտարերկրացիների եւ առանց քաղաքացիության անձանց իրավական վիճակի մասին» նոր օրենքը: Համաձայն դրա, Վրաստանում առանց այցեգրի գտնվելու ժամկետը 390-ի փոխարեն նվազեցվել է մինչեւ 90 օրը՝ 180 օրվա ժամանակահատվածով: Բացի այդ, 24 երկրների հետ Վրաստանը վերացրել է անայցեգրային համակարգը, իսկ Եվրամիության, ՆԱՏՕ-ի, շենգենյան գոտու, ԱՊՀ եւ մյուս գործընկեր երկրների հետ անայցեգրային համակարգը պահպանվել է: Սակայն, եթե օտարերկրացին ցանկություն ունենա Վրաստանում գտնվել 90 օրից ավելի, նա պետք է ստանա այցեգիր: Սույն ընթացակարգն առնչվում է նաեւ այն երկրների քաղաքացիներին, որոնց հետ Վրաստանը պահպանում է անայցեգրային իրավակարգ:

Նշենք, որ օրենքի կատարելագործման ուղղությամբ աշխատանք է տանում նաեւ Վրաստանի արտաքին գործերի նախարարը: Ինչպես նշեց ԱԳ նախարար Մայա Փանջիկիձեն, աշխատանքները արագ կերպով է տարվում եւ հուսով է, որ արդեն հոկտեմբերին առանձին հարցեր կկարգավորվեն:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԻՆՆ ԱՆՈՒՆ ԴԵՂՈՐԱՅՔ՝ ԱՐՏԱԿԱՐԳ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՄԱՐ

Արտակարգ դեպքերում, Վրաստանում առանց դեղատոմսերի վաճառվող դեղերի ցուցակը ավելացվել է ինն անունով:

Վրաստանի աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Դավիթ Սերգեյենկոյի հրամանագրի համաձայն, այդ դեղորայքի ցանկում ընդգրկվել են ամիոդարոնը (հակաառիթմիական միջոց), պրեդնոզոլոնը, ֆուրոսեմիդը, հակաշաքարախտային գլիբենկլամիդը եւ մետֆորմինը, ինչպես նաեւ արյան ճնշումը նվազեցնող կապտոպրիլը, նիֆեդիպինը եւ մետոպրոլոլը՝ հաբերով:

Այն դեղորայքի թվում, որոնք դեղատները անհրաժեշտության դեպքում կարող են վաճառել, ընդգրկված են նաեւ գլյուկոզան, ինսուլինը, ադրենալինը, դիմեդրոլը, անտրոպինը եւ այլն:

Դեղագործական հաստատությունն իրավասու է հանձնելու միայն մեկ դոզա կոնկրետ անձին, որը անհապաղ օգնության կարիք է զգում:

Հիշեցնենք, որ սեպտեմբերի 1-ից ուժի մեջ մտած օրենքի համաձայն, առանց դեղատոմսերի չեն վաճառվում քնաբեր եւ սեդատիվային դեղերը, բացառությամբ բուսական ծագման դեղերի, հակադեպրեսանտները, համակարգային օգտագործման կորտիկոստերոիդները, հակաուռուցքային եւ իմունամոդուլյատորները, համակարգային օգտագործման հակամանրէական դեղերը, պարկինսոնի հիվանդության դեղերը, հակագիստանային սրսկման դեղերը, գլիկոզիտները, շաքարախտի բուժման համար առիթմիայի եւ գիպերտենզիի դեղորայքը, ինչպես նաեւ բոլոր տեսակի ներարկիչները:

ԱՆՑՆՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՈՐ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Վրաստանի պարենամթերքի ազգային գործակալությունն անցնում է աշխատանքի նոր չափորոշիչների: Դրան մեծապես կնպաստի հոկտեմբերի 10-ին գործակալության համար բացված, նորագույն տեխնոլոգիաներով հագեցված գրասենյակը:

Գրասենյակի բացմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիան: Վարչապետը ծանոթացավ նոր գրասենյակի աշխատանքի գործընթացին եւ զրուցեց գործակալության աշխատակիցների հետ: Հանդիպմանը նշվեց, որ գործակալության ֆինանսավորումը զգալիորեն ավելացվել է:

ԽՍՏԱՑՎՈՒՄ ԵՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԸՆԴՀԱՏՄԱՆ ԵՎ ՄԱՐՄՆԱԿԱՆ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐ ՀԱՍՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Վրաստանի քրեական օրենսգրքում կատարվել են փոփոխություններ: Փոփոխությունների համաձայն, հղիության արհեստական ընդհատումը պատժվում է 1-ից 2 տարվա ազատազրկման կամ 20-ից մինչեւ 300 ժամվա հանրօգուտ աշխատանքով:

Նույն գործողությունը, որի արդյունքում ծագում է չբերություն կամ այլ հետեւանքներ, պատժվում է 2-ից 5 տարվա ազատազրկման ու մինչեւ 3 տարվա բժշկական գործունեության իրավունքից զրկմամբ:

Կնոջ մահվան հանգեցրած հղիության ընդհատումը պատժվում է 4-6 տարվա ազատազրկման եւ 3 տարվա բժշկական գործունեության իրավունքից զրկմամբ:

Նշենք, որ մինչ այդ հղիության արհեստական ընդհատման համար նախատեսված էր 100-ից մինչեւ 240 ժամվա հանրօգուտ աշխատանք կամ 2 տարով ուղղիչ աշխատանք:

Խստացվել են նաեւ մարմնական ծանր վնասվածքներ հասցնելու համար նախատեսված պատիժները: Համաձայն Վրաստանի քրեական օրենսգրքում կատարած փոփոխությունների, կանխամտածված մարմնական ծանր վնասվածքներ հասցնելու համար սահմանվել է 5-ից 6 տարվա ազատազրկում: Պատժամիջոցն է'լ ավելի է խստացվում, եթե մարմնական վնասվածքները հանգեցրել են մահվան:

Վրաստանի քրեական օրենսգրքում կատարած փոփոխությունները մտել են ուժի մեջ:



ՆՇՎԵՑ ՎՐԱՑԱԿԱՆ ԳԻՆՈՒ ՕՐԸ

Հոկտեմբերի 4-ին նշվեց վրացական գինու օրը: Տոնի առթիվ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին այցելեց Կախեթիի տարածաշրջան: Տեղի բնակիչների հետ հանդիպմանը, վարչապետը նշեց, որ վերջին երկու տարիների ընթացքում խաղողագործների եկամուտները նշանակալիորեն աճել են: Նրա խոսքերով, ներկա դրությամբ, Կախեթիում հավաքվել է 115 հազար տոննա խաղող, որի դիմաց բնակիչներին տրվել է 155 միլիոն լարի:

Նշենք, որ վրացական գինու օրը արդեն երկրորդ տարին է, ինչ նշվում է վարչապետի նախաձեռնությամբ:

ՔՆՆԱՐԿՎԵՑ 100 ՄԻԼԻՈՆԱՆՈՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու նախագահությամբ անցկացված տնտեսական խորհրդի նիստում քննարկվեց «Արքայական այգիներ» ներդրումային նոր նախագիծը:

Այն խորհրդի անդամներին ներկայացրեց Թբիլիսիի քաղաքապետ Դավիթ Նարմանիան: Տնտեսական խորհրդի որոշմամբ, մոտ ժամանակներս ճարտարապետական նախագծի համար կհայտարարվի մրցույթ: Նախագիծն իրականացնելու է «Ապոլո Գ» ընկերությունը:

ՎՐԱՍՏԱՆԸ ԿՈՒՆԵՆԱ 37 ՀԱԶԱՐԱՆՈՑ ԲԱՆԱԿ

Վրաստանի ազգային անվտանգության խորհրդում հայտարարել են, որ երկրի զինված ուժերի թվաքանակի փոփոխություն չի պլանավորվում:

Անվտանգության խորհրդի տվյալներով՝ 2015 թվականին զինծառայողների հաստիքակազմը չի գերազանցի 37 հազարը:

Ինչպես ասված է Ազգային խորհրդի տարածած հաղորդագրության մեջ, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին արդեն խորհրդարանի հաստատմանն է ուղարկել Զինված ուժերի թվաքանակի վերաբերյալ փաստաթուղթը:

ԶՎԻԱԴ ՁԱՆՂԱՐԱՇՎԻԼԻՆ՝ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ԳՈՐԾԱԴԻՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«Վրացական երազանք» քաղաքական միավորման քաղխորհրդի որոշմամբ, Վրաստանի ներքին գործերի նախարարության գլխավոր տեսչության նախկին ղեկավար Զվիադ Ձանղարաշվիլին նշանակվել է կուսակցության գործադիր քարտուղար: Այդ մասին լրագրողներին տեղեկացրեց «Վրացական երազանքի» գլխավոր քարտուղար, փոխվարչապետ, Վրաստանի էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն:

ՆԵՐՈՒՄ՝ 115 ԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ

Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հոկտեմբերի 8-ին ներում է շնորհել 115 բանտարկյալի:

Նախագահին առընթեր համաներման հանձնաժողովի քննարկմանն էր ներկայացվել 699 դիմում, որոնցից հանձնաժողովը նախագահի ստորագրմանն էր ներկայացրել 115-ի հայցը: Ներման արժանացած բանտարկյալների թվում են չորս անչափահաս եւ մեկ կին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՁՈՀՎԱԾ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հոկտեմբերի 7-ի առավոտյան, Վրաստանում պաշտոնական այցով գտնվող Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Գալուստ Սահակյանը, պատվիրակության անդամների հետ միասին այցելեց Թբիլիսիի Հերոսների հրապարակ:

Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության անդամները ծաղկեպսակ դրեցին Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհված հերոսների հուշահամալիրին:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

համագործակցության ոլորտում վերջին տարիներին ձեւավորվել են հստակ ուղղություններ: Դրանք ընդգրկում են տրանսպորտի եւ էներգետիկայի, զբոսաշրջության եւ գյուղատնտեսության բնագավառները: Գալուստ Սահակյանը կարեւորեց Վերին Լարսի սահմանային անցակետի անխափան գործունեությունը:

Արձագանքելով բազմաթիվ վիրահայերի խնդրանքներին, Հայաստանի Ազգային ժողովի նախագահը դիմեց Վրաստանի վարչապետին. «Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել եւ աջակցությունը խնդրել՝ դյուրացնելու մշտական կացության իրավունքի տրամադրումը հայազգի վրաստանաբնակ այն քաղաքացիներին, որոնք, մեկնելով արտագնա աշխատանքի, ստացել են այլ երկրների քաղաքացիություն: Վրաստանում օրենսդրական փոփոխությունների հետեւանքով նրանք հայտնվել են դժվար կացության մեջ՝ հնարավորություն չունենալով մշտապես բնակվել իրենց ընտանիքների հետ»:

Անդրադառնալով Վրաստանում վիզային ռեժիմին առնչվող օրենսդրական փոփոխություններին՝ Վրաստանի վարչապետը տեղեկացրեց. «Ասոցիացման համաձայնագրի ստորագրման կապակցությամբ մենք ստացել ենք աշխատանքային պլան: Դրանով են պայմանավորված վիզային ռեժիմի նոր կարգավորումները, որոնցից ելնելով՝ հարկ եղավ օրենսդրությունը ենթարկել որոշակի փոփոխության: Պետությանն իրավունք է վերապահված որոշ երկրների կամ քաղաքացիների նկատմամբ արտոնություններ սահմանելու: Այդ հարցին անպայման լուծում կտրվի»,- վստահեցրեց վարչապետը:

Հանդիպմանը քննարկվեցին նաեւ առեւտրատնտեսական հարաբերությունների հեռանկարները: Նշվեց, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ պետք է ավելի շատ տրանսպորտային հանգույցներ լինեն:

ԲԱԶՄԱԴԱՐՅԱՆ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԲԱՐԻ ԿԱՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԳԱՆՔԻ ՎՐԱ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Նրա խոսքով՝ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ բարեկամական հարաբերությունները բազմադարյան պատմություն ունեն՝ հիմնված բարի կամքի դրսեւորման ու փոխադարձ հարգանքի վրա: Երկու ժողովուրդներին միավորում են նաեւ մշակութային եւ հոգեւոր ընդհանրությունները: Հայաստանի Ազգ նախագահի խոսքերով՝ անկախություն ձեռք բերելուց հետո երկու երկրների միջեւ հարաբերությունները հասել են բարձր մակարդակի, ինչը կայուն հիմք է հանդիսանում փոխշահավետ համագործակցության դինամիկ զարգացման համար: Այս համատեքստում նա կարեւորել է խորհրդարանական համագործակցության հանձնաժողովների գործունեությունը:

Գալուստ Սահակյանն իր խոսքում նշեց նաեւ, որ Հայաստանն ու Վրաստանն ընտրել են միջազգային քաղաքական ինտեգրացիոն տարբեր ուղիներ: Սակայն, նման մոտեցումները չեն կարող խոչընդոտ հանդիսանալ երկու երկրների հետագա շփումների ու կապերի համար, այլեւ որոշակի առումով կարող են փոխլրացնել եւ իրենց դրական անդրադարձն ունենալ ոչ միայն միջպետական հարաբերությունների, այլ նաեւ տարածաշրջանում գործընկերային եւ փոխշահավետ համագործակցության զարգացման համար:

Խոսելով մշակութային ոլորտում համագործակցության մասին՝ Գալուստ Սահակյանը նշեց, որ այն մշտապես եղել է ուշադրության կենտրոնում եւ դա բնական է, քանի որ երկու ժողովուրդների մշակութային կապերը եւ պատմականորեն ձեւավորված արժեքային ընդհանուր համակարգը հիմք են հանդիսանում հետագա համագործակցության զարգացման համար: Այդ համատեքստում Հայաստանի Ազ նախագահը վրացական կողմի ուշադրությունը հրավիրեց Վրաստանի տարածքում հայկական մշակութային ժառանգության պահպանության խնդիրներին եւ, մասնավորապես, ընդգծեց, որ անհրաժեշտ է հրատապ քայլեր ձեռնարկել Մուղնեցոց Սուրբ Գեւորգ, Սուրբ Նշան եւ Սուրբ Նորաշեն եկեղեցիների վերականգնման եւ պահպանության ուղղությամբ: Գալուստ Սահակյանն անդրադարձել է եւս մեկ խնդրի՝ Հայաստանի քաղաքացիների մուտքը Վրաստանի տարածք արգելելու երեւույթին: Նրա խոսքով՝ վերջին շրջանում Հայաստանի որոշ քաղաքացիների կողմից բողոքներ են ստացվել, որ հայ-վրացական սահմանային անցակետերում վրաց սահմանապահների կողմից արգելվել է վերջիններիս մուտքը Վրաստանի տարածք:

Ի պատասխան ՀՀ Ազ նախագահի վերջին դիտարկմանը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահն ափսոսանք հայտնեց նման միջադեպերի առնչությամբ, եւ հույս հայտնեց, որ խնդիրը կկարգավորվի:

Հայաստանի Ազ նախագահն անդրադարձավ Հայոց Ցեղասպանության 100-ամյակի հարցին: Նա Վրաստանի խորհրդարանականներին հրավիրեց մասնակցելու 2015 թվականի ապրիլին Երեւանում կայանալիք ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ոգեկոչման միջոցառումներին: Նա հույս հայտնեց, որ Վրաստանի խորհրդարանը համապատասխան անդրադարձ կկատարի մարդկության դեմ իրականացված այդ ոճրագործությանը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցերի:

Հանդիպման ավարտին Հայաստանի Ազ նախագահ Գալուստ Սահակյանը գրառում կատարեց Վրաստանի խորհրդարանի պատվավոր հյուրերի գրքում: Այնուհետեւ երկու երկրների խորհրդարանների նախագահները հանդես եկան համատեղ մամլո ասուլիսում:

Վրաստանի եւ Հայաստանի խորհրդարանների ղեկավարները՝ Դավիթ Ուսուփաշվիլին եւ Գալուստ Սահակյանը, հավաստեցին համագործակցությունը շարունակելու եւ միմյանց շահերը պաշտպանելու երկու երկրների մտադրությունը,: «Մենք մեկ անգամ եւս հավաստեցինք, որ, չնայած այն բանին, որ Վրաստանը ԵՄ-ի հետ ասոցիացման համաձայնագրի շնորհիվ եվրաինտեգրացման ուղին է բռնել, իսկ Հայաստանը, ելնելով իր ռազմավարական շահերից, պատրաստվում է անդամակցել Եվրասիական միությանը, մեր երկրների միջեւ հարաբերություններում ոչ մի վատ փոփոխություն չի լինի: Ընդհակառակը, մենք պայմանավորվել ենք պաշտպանել միմյանց շահերն այդ միավորումներում»,- հանդիպման ավարտից հետո հրավիրված համատեղ մամլո ասուլիսում հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

* * *

Պաշտոնական այցի շրջանակներում, Հայաստանի Ազ նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորությամբ պատվիրակությունն այցելեց նաեւ Վրաստանում Հայաստանի դեսպանատուն, որից հետո Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանի ուղեկցությամբ պատվիրակության անդամներն այցելեցին Թբիլիսիի Խոջիվանքի Հայ գրողների եւ հասարակական գործիչների պանթեոն եւ ծաղիկներ դրեցին հայ մեծերի շիրիմներին:

ԱՐՄԵՆՊՐԵՍ-«ՎՐԱՍՏԱՆ»

ԻԼԻԱ ԵՐԿՐՈՐԴ. «ՎՐԱՑ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԵՆ ՍՏԵՂԾԵԼ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՎՈՐ ԿՈԹՈՂՆԵՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րիայում եւ Իրաքում տեղի ունեցող իրադարձությունների պատճառով վտանգված է ամբողջ արեւելյան քրիստոնեական քաղաքակրթությունը:

Կաթողիկոսը ողջունեց հյուրերին եւ նշեց, որ, չնայած պատմական ծանր անցյալին, վրաց եւ հայ ժողովուրդները կարողացել են ստեղծել մշակութային կոթողներ: Ինչ վերաբերում է վերոնշյալ եկեղեցիներին, ապա կաթողիկոսը նշեց՝ Վրաստանն ու Հայաստանը տարածաշրջանում քրիստոնեության օազիսներ են՝ հավելելով, որ երկու ժողովուրդներին կհաջողվի խնդիրներին արդար լուծում տալ:

Անդրադառնալով Սիրիայում եւ Իրաքում տեղի ունեցող իրադարձություններին՝ Վրաց Պատրիարքը համարել է դրանք առավել քան վտանգավոր:

Այնուհետեւ ՀՀ Ազ նախագահ Գալուստ Սահակյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Վրաստանի արտաքին գործերի նախարար Մայա Փանջիկիձեի հետ:

ԱՆՑԿԱՑՎԵՑ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ՆԻՍՏ

Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության Վրաստան պաշտոնական այցի շրջանակներում անցկացվեց երկու երկրների խորհրդարանների միջեւ համագործակցության միջխորհրդարանական խմբերի համատեղ նիստը: Այն վարում էին համագործակցության խմբի համանախագահներ, Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Մանանա Կոբախիձեն եւ Հայաստանի Ազ փոխնախագահ Հերմինե Նաղդալյանը:

Նշենք, որ վերջին տարիներին թեեւ Վրաստան-Հայաստան միջխորհրդարանական համագործակցության խմբերի աշխատանքները դանդաղել էին, ինչը պայմանավորված էր երկու երկրների ընտրությունների գործընթացի կազմակերպման հետ, սակայն այժմ երկու երկրների միջխորհրդարանական համագործակցության խմբերի աշխատանքներն էականորեն ակտիվացել են:

ԱՋԱՐԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՌԻԻ ՄԱՐԶՈՒՄ

Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահ Արչիլ Խաբաձեն, կառավարության մյուս անդամները պաշտոնական այցով գտնվում էին Հայաստանի Լոռիի մարզում:

Ինքնավարության պատվիրակությունը, որի կազմում էին Աջարիայի գյուղատնտեսության նախարար Զաուր Փութկարաձեն, առողջապահության նախարար Նուգզար Սուրմանիձեն, կրթության նախարար Գիորգի Թավամաիշվիլին եւ Բաթումիի քաղաքապետ Գիորգի Երմակովը հանդիպում ունեցան Լոռիի մարզի եւ Վանաձորի իշխանությունների ներկայացուցիչների հետ, մասնակցեցին բերքի տոնին, դիտեցին ցուցադրական տաղավարում ներկայացված նմուշները:

Այցի շրջանակներում՝ Աջարիայի ներկայացուցիչներն այցելեցին Սանահին եւ Հաղպատ վանական համալիրներ:

Այցի նպատակն էր խորացնել մշակութային եւ տնտեսական կապերը Աջարիայի եւ Լոռիի մարզի միջեւ: